լաք) գյուղը, այժմյան Ջերմուկ (Իստիսու) բուժավայրի մոտ, հողերը ոռոգելու համար, իսկ մի փոքր ավելի հարավ, Որոտանի (Քոչբեկի) լեռնանցքով, խճուղին շատ թեթև գալարումներով ելնում՝ իջնում է մի կողմից մյուսը։ Այդ է պատճառը, որ Հայոցձորի (Դարալագյազի) հնում՝ Վայոց ձորի գոգհովիտը իր պատմական անցյալով շարունակ կապված է եղել Զանգեզուրի Սիսիանի (Հին Ծղուկի) գավառի հետ։ Քաչալդաղի հարևան Անանուն (Безымянный) գագաթից դեպի հարավ, որտեղից սկսվում է այժմ Հայաստանի և Նախիջևանի միջհանրապետական սահմանագիծը, ձգվում է շղթայի ամենաբարձր հատվածը։ Այստեղ են գլխավորապես շարված նրա ամենավեր ելնող գագաթները։ Այստեղ երկու կողմերից հարևան տարածությունները ընդհանրապես ավելի և ավելի արագ ցածրանում են, սեռը ավելի սուր և շեշտակի է որոշվում, լանջերը դառնում են խիստ զառիթափ։ Այստեղ Սարվարդ (Սալվարդ՝ Աղոթարան) գագաթի հարավով Բիչանաղի (Բիչենաղի) թամքոցով խճուղին բազմաթիվ դժվարին կեռմաններով տանում է Նախիջևանից հին Ճահուկ գավառի Շահապոնս գավառակից՝ Սիսիան։ Այս լեռնանցքով շատ հին ժամանակներից Նախիջևանի աղը փոխադրվել է Զանգեզուր և ավելի հեռու՝ Ղարաբաղ և Մերձկասպյան տափաստանները։ Այս լեռանցքով տեղի էին ունենում Նախիջևանի խաներին հրոսակների ներխուժումները Ղարաբաղի խանության գյուղերն ու Զանգեզուրի մելիքական կալվածքները։ Սարվարդից (Սալվարդից) դեպի հարավ սեռը ավելի և ավելի բարձրանում է և փոխվում է սուր և ցից ժայռերի. լանջերը ավելի դժվար ելանելի են դառնում, մանավանդ արևմուտքից։ Այդտեղ են բարձրագույն գագաթները՝

Ղազանդաղը—3 858 մ,

Կապուտջուղը (Կապուտջիղը)—3 920 մ,

Յաղլուն—3 843 մ և

Կապ սարը (Ղափլանդաղը) կամ Այիչինգիլը—3 305 մ։

Կապուտջուղը (Կապուտջիղը) Արագածից հետո (4 096 մ) Սովետական Հայաստանի երկրորդ հավերժական ձյունով ծածկված լեռն է համարվում։ Լեռնաշղթայի դեպի հյուսիս-արևելք նայող գոգավորությունների մեջ ձյունը մնում է երկար ամիսներ, հաճախ մինչև նոր ձյան իջնելը։ Բիչանաղից՝ Սիսիանի լեռնանցքից (Բիչենաղից) հարավ թամքոցները մատչելի են միայն ամառային ամիսներին ֆշվորների տեղափոխության համար։ Քիչ շատ հարմար է Քաջարանի (Կապուտջիղի) լեռնանցքը, որը Կապուտջուղի լեռնագագաթի դռնակի մոտով միացնում է Նախիջևանի ԱՍՍՀ-ի Ագուլիսի և Օրդուբադի հովիտները Ողջի (Օխչի) գետի հովտի հետ, սակայն այդտեղով անցնող կածանի դժվարությունները հաղթում են միայն թեթև բարձած գրաստների քարավանները, այն էլ տարվա հինգ տաք ամիսներին։ Կապ սարից (Ղափլանդաղից) դեպի հարավ լեռնաշղթան հատկապես կոչվում է Ալանգյազ (Զանգեզուր), բաժանելով Օրդուբադի շրջանը Մեղրու շրջանից։ Սեռը հետզհետե իջնում է և լայնանում, իջխում են կմախք ապառաժներ և հողմահարված քարային մանրուքներ։

Մոտենալով Արաքսին, լեռնաշղթան հանկարծ հատվում է գրեթե ուղղաձիգ փուլքով Սևքարի (Ղարադաղի) լեռնաշղթայի արևմտյան ծայրի դիմաց, տեղ-տեղ այնպես ընդհուպ կախվելով գետի ջրերի գլխին, որ կիրճով անցում երթևեկության համար չի մնում տարածություն և այստեղ մինչև Ալյաթ-Ջուլ-